ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1208-Ա/2 14 սեպտեմբերի, 2020 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՎ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԸՆԴԳՐԿՄԱՄԲ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգ»-ի դրույթներով և հիմք ընդունելով «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ գիտական թեմաների մրցույթին ներկայացված հայտերի գնահատման մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի N 3 արձանագրությունը և 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված «Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների նոր գիտական թեմաների, այդ թվում՝ թիրախային (նպատակային) գիտական թեմաների ֆինանսավորում» ծախսային ուղղությամբ նախատեսված ծավալները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

ա) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքները,

բ) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,

գ) ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2020 թվականի սեպտեմբերից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

Նախարար Արայիկ Հարությունյան

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2020 թ. սեպտեմբերի 14-ի
N 1208-Ա/2 հրամանի

«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՎ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԸՆԴԳՐԿՄԱՄԲ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

ՑԱՆԿ

Հ/հ	Ծածկագիր	Թեմայի անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
1	20TTSH-002	Նահատակներին նվիրված միջնադարյան հուշարձանները Հայաստանում՝ Վարդանանց սրբավայրերի օրինակով (հնագիտական և մարդաբանական ուսումնասիրություն)	Միրիջանյան Դիաննա Հրաչյայի	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
2	20TTSH-005	Հայկական լեռնաշխարհի պատմության հիմնախնդիրներ. շրջակա միջավայրը, կլիմայական փոփոխությունները և քաղաքակրթական գործընթացները	Գրեկյան Երվանդ Համբարձումի	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
3	20TTSH-006	Հայկական լեռնաշխարհի նախապատմական մշակութային փոխակերպումների շարժառիթները. հնագիտությունից դեպի գենետիկա	Եպիսկոպոսյան Լևոն Միխայելի	«Մարդու ինստիտուտ» ՍՊԸ
4	20TTSH-007	Սփյուռքի ներուժի քարտեզագրման մոդելի մշակում ֆրանսահայերի ուսումնասիրության օրինակով	Պողոսյան Սվետլանա Հայկի	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ

5	20TTSH-008	Կրոնական բազմազանությունը Հայաստանում. Խորհրդային և հետխորհրդային շրջանում կրոնական լանդշաֆտի սոցիո-մշակութային փոխակերպումների վերլուծության փորձ	Անտոնյան Յուլիա Յուրիի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
6	20TTSH-009	Արագածի հյուսիսարևմտյան լանջերի բրոնզ-երկաթեդարյան բնակչության սոցիալ-ժողովրդագրական վերլուծության խնդիրները	Խուդավերդյան Անահիտ Յուրիի	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
7	20TTSH-023	Անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգային ծառայությունները և տեղական ինքնակառավարման արդյունավետությունը Հայաստանում. միջդիսցիպլինար հեռանկար	Գրիգորյան Հեղինե Սոկրատի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
8	20TTSH-040	Հետխորհրդային Հայաստանի բնակչության արտագաղթի հիմնախնդիրը սփյուռքի էթնիկ ցանցի համատեքստում	Գալստյան Միհրան Վարդգեսի	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
9	20TTSH-042	Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող Հայոց ցեղասպանության վավերագրերի քննական ուսումնասիրություն	Սահակյան Լուսինե Սուրենի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
10	20TTSH-043	Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը 1914-1939թթ. ազգային-քաղաքական գործընթացների և Սփյուռքի հայապահպանության հոլովույթում	Հարությունյան Ավետիս Հմայակի	«Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ
11	20TTSH-046	Հարավային Կովկասը միջազգային տարանցիկ առևտրի ուղիներում XI-XVIII դարերում	Կոստիկյան Քրիստինե Պետրոսի	«Մատենադարան» Մ.Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ

12	20TTSH-047	Հայկական լեռնաշխարհը հին արևելքի ք.ա. III հազարամյակի երկրորդ կեսի և II հազարամյակի առաջին կեսի գրավոր աղբյուրներում	Ղազարյան Ռոբերտ Պետրոսի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
13	20TTSH-053	Բնական բուսական ռեսուրսների օգտագործումը Սյունիքում. ավանդույթները, ժամանակակից միտումները և հեռանկարները	Հովսեփյան Ռոման Աղասու	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
14	20TTSH-056	«Covid 19»-ի հետևանքները. սոցիալական աղքատությունը և հասարակության կառուցվածքային այլափոխումները հետ-համավարակային Հայաստանում	Վարտիկյան Արամ Ռոբերտի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
15	20TTSH-063	Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում	Սարգսյան Մերի Արթուրի	ՀՀ ԳԱԱ «Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ
16	20TTSH-070	Անձ և սոցիալական վարք. COVID-19-ի կարճաժամկետ և երկարաժամկետ հոգեբանական հետևանքները Հայաստանում	Խաչատրյան Նարինե Գագիկի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
17	20TTSH-074	«Վերահայացման անատոմիա». Արցախում վերաբնակեցման գործընթացը 1992-2016 թվականներին	Հակոբյան Ալեքսան Հակոբի	ՀՀ ԳԱԱ «Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ